

## ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԳՈՐԾԵՐՈՎ` ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ

### Դավիթ Ավետիսյան

*ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ,  
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ՀՀ վաստակավոր իրավաբան*

Միջազգային և ներպետական փաստաթղթերի վերլուծությունը վկայում է, որ քրեական արդարադատության պարզեցումը, այն առավել խնայողական դարձնելը, հանցավորության դեմ պայքարի ոլորտում առավել գործուն կառուցակարգերի ներդրումը քրեական արդարադատության զարգացումներից են:

ՀՀ կառավարության կողմից 10.03.2011 թվականին հաստատված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգով (այսուհետ նաև՝ Հայեցակարգ) նախատեսվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ներդնել քրեական արդարադատության պարզեցմանն ու արդյունավետության բարձրացմանն ուղղված մի շարք ինստիտուտներ, որոնցից է նաև մասնավոր մեղադրանքի ինստիտուտը:

Ըստ Հայեցակարգի՝ մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի առանձնացումը նպատակ է հետապնդում գործի քննության ծանրությունը տեղափոխել դատարան: Այդ գործերով մինչդատական վարույթը, որպես այդպիսին, բացակայում է: Տուժողի բողոքը անմիջականորեն հասցեագրվում է դատարանին, որն էլ կողմերի ներկայացրած և հետագայում դատարանի կողմից ձեռք բերված նյութերի հիման վրա ամբողջ ծավալով քննում և լուծում է գործը: Վարույթի այս տեսակը ևս կարող է տարբերակում ունենալ, օրինակ՝ երբ մեղադրյալն ընդունում է տուժողի կողմից իրեն վերագրվող արարքը: Հայեցակարգում ընդգծված է նաև, որ նախագծում պետք է հստակ սահմանել մասնավոր մեղադրանքի կարգով քննվող հանցագործությունների շրջանակը. դրանք են միայն ոչ մեծ ծանրության հանցագործությունները: Պետք է նկատի ունենալ նաև կատարված հանցագործությամբ ներկայացված «քրեական հայցը» պաշտպանելու տուժողի ունակությունն ու հնարավորությունները (տե՛ս կետեր 5.7.-5.8.):

Վերոգրյալ հայեցակարգային դրույթների հիման վրա ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի (այսուհետ նաև՝ Նախագիծ) 54-րդ գլխում ամրագրված են այնպիսի կանոններ, որոնք էականորեն տարբերակում են մասնավոր մեղադրանքի ինստիտուտը գործող քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված ինստիտուտից:

Առավել ակնառու տարբերությունները հետևյալներն են.

1) մասնավոր մեղադրանքի գործերով նախաքննություն չի իրականացվում՝ տուժողն իր խախտված իրավունքների վերաբերյալ ներկայացնում է քրեական հայց անմիջականորեն դատարան,

2) դատարանում մեղադրանքը պաշտպանում և դրա հիմնավորման պարտականությունը կրում է տուժողը,

3) տուժողը պարտավոր է օրենքով սահմանված պահանջներին համապա-

տասխան կազմել և ներկայացնել քրեական հայցը, հակառակ դեպքում՝ դատարանն իրավունք ունի վերադարձնելու այն կամ մերժելու քրեական վարույթ սկսելը,

4) մեղադրյալի կողմից տուժողի դեմ կարող է ներկայացվել հակընդդեմ քրեական հայց,

5) տուժողն իրավունք ունի լրիվ կամ մասնակի հրաժարվելու մեղադրանքից,

6) մեղադրյալի կողմից գրավոր բացատրություններ ներկայացնելու դեպքում հնարավոր է հիմնական դատալուծումներ իրականացնել նրա բացակայությամբ,

7) տուժողի կամ նրա ներկայացուցչի կողմից երեք անգամ առանց հարգելի պատճառների դատական նիստերին չներկայանալու դեպքում քրեական հետապնդումը դադարեցվում է:

Նախագծի 54-րդ գլխում մասնավոր մեղադրանքով վարույթի առանձնահատկությունները կանոնակարգող նորմերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ խափանման միջոցների կիրառման առումով որևէ հատուկ կանոն կամ առանձնահատկություն նախատեսված չէ, ինչից կարելի է հետևություն անել, որ մասնավոր մեղադրանքով վարույթի շրջանակներում խափանման միջոցների կիրառումն իրականացվում է նույն կարգով, ինչ հանրային մեղադրանքի կարգով իրականացվող վարույթի դեպքում:

Նման առանձնահատկությունների մասին որևէ նշում չեն պարունակում նաև Նախագծի՝ խափանման միջոցների կիրառման հարցերը կանոնակարգող նորմերում: Ըստ էության Նախագծով այդ հարցերի կանոնակարգումը թողնված է դատական պրակտիկային, որը, ինչպես գիտենք, բազմազան է և ոչ միանշանակ:

***Այստեղ հարց է ծագում, թե որքանով է իրավաչափ այդ մոտեցումը:***

Կարծում ենք՝ Նախագծով պետք է որոշակի կանոնակարգման ենթարկվեին նաև խափանման միջոցների կիրառման հարցերը մասնավոր մեղադրանքի դեպքում՝ հաշվի առնելով դրա առանձնահատկությունները: Եթե գործող քրեական դատավարության օրենսդրության կանոնակարգումների պայմաններում մասնավոր մեղադրանքի գործերն ունեն ընդամենը մեկ կամ երկու ոչ էական առանձնահատկություն, մասնավորապես՝ այդ գործերը կարող են հարուցվել ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, իսկ տուժողի և ամբաստանյալի հաշտության դեպքում ենթակա են կարճման, ապա, ինչպես նշեցինք, Նախագծով գրեթե ընդհանրություն չկա մասնավոր և հանրային մեղադրանքով վարույթների միջև: Հետևաբար, եթե գործող օրենսդրության պայմաններում խափանման միջոցների ինստիտուտի կիրառման դեպքում որևէ հատուկ կանոն չնախատեսելը հասկանալի է և տրամաբանական, նույնը չի կարելի ասել Նախագծի պարագայում:

Նախևառաջ խնդրահարույց է այն հարցը, թե իրավասու է արդյոք տուժողը՝ որպես մեղադրող, դատարանին միջնորդելու մեղադրյալի նկատմամբ կիրառելու որևէ խափանման միջոց: Այս հարցադրման էությունն այն է, որ Նախագծի՝ տուժողի իրավունքները և պարտականությունները կանոնակարգող 50-րդ հոդվածի վերլուծությունից երևում է, որ տուժողն ունի միջնորդություններ հարուցելու իրավունք՝ առանց կոնկրետացնելու այն հարցերի շրջանակը, որոնց դրանք կարող են վերաբերել: Հետևաբար կարելի է ենթադրել, որ տուժողն իրավունք ունի նաև խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն հարուցել, քանի որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իր իրավունքները: Սակայն Նախագծի՝ խափանման միջոցների կիրառմանը վերաբերող նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ տուժողը նման միջնորդություն հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտների շարքում նշված չէ, ուստի ստացվում է, որ տուժողի՝ միջնորդություն հարուցելու իրավասությունը չի վերաբերում խափանման

միջոց կիրառելուն: Օրինակ, Նախագծի 118-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ. «Կալանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ փաստական հանգամանքների բավարար ամբողջությամբ քննիչի կամ դատախազի կողմից հիմնավորվել և դատարանի կողմից պատճառաբանված հաստատվել են սույն օրենսգրքի 116-րդ հոդվածով նախատեսված իրավաչափության համապատասխան պայմանները: Դատական վարույթում կալանքի կիրառման համար բավարար է դատարանի կողմից նշված պայմանների պատճառաբանված հաստատումը»:

Հիշյալ դրույթից ակնհայտ է դառնում, որ կալանք կիրառելու միջնորդություն հարուցելու և հիմնավորելու իրավասությունը պատկանում է քննիչին և դատախազին, իսկ տուժողը նման միջնորդությամբ հանդես գալու իրավասությամբ օժտված չէ: Դրա մասին է վկայում նաև այն, որ Նախագծի 446-րդ հոդվածի 3-րդ մասում, որը վերաբերում է քրեական հայցի բովանդակությանը ներկայացվող պահանջներին, չի սահմանվում, որ տուժողը քրեական հայցում իրավունք ունի միջնորդելու դատարանին, որպեսզի նա քննարկի կամ կիրառի խափանման միջոց:

Քանի որ Նախագծով մասնավոր մեղադրանքի գործերը հանդես են գալիս որպես քրեական դատավարությունում դիսպոզիտիվության դրսևորում<sup>1</sup>, որում մրցակցությունը լրիվ ծավալով է արտահայտվում՝ առանց որևէ սահմանափակման կամ բացառության, ուստի գտնում ենք, որ խափանման միջոցի կիրառման հարցում ևս տուժողը պետք է ունենա կամքի արտահայտման հնարավորություն<sup>2</sup>:

Այս առումով տեղին է համեմատական անցկացնել Նախագծի 446-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված այն կանոնակարգման հետ, որի համաձայն՝ անկախ քրեական հայց հարուցելուց՝ դատախազն իրավասու է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություններով նախաձեռնել քրեական վարույթ, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Այս դեպքում քրեական վարույթն իրականացվում է օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:

Ընդհանուր կարգով քննության դեպքում թե՛ քննիչը, թե՛ դատախազը կարող են անձամբ կիրառել որևէ խափանման միջոց, իսկ կալանքի և տնային կալանքի դեպքում՝ միջնորդել, որ դատարանը կիրառի համապատասխան խափանման միջոցը, ուստի իրավաչափ չէ այն վիճակը, որ նույն մասնավոր մեղադրանքի կարգով քննվող հանցագործության վերաբերյալ գործով, եթե բացակայում են նախագծի 446-րդ հոդվածի 4-րդ մասում նշված ընդհանուր կարգով քննություն իրականացնելու հիմքերը, տուժողը զրկվի խափանման միջոց կիրառելու միջնորդություն հարուցելու հնարավորությունից: Միանշանակ ընդունելով, որ խոցելի տուժողների շահերի պաշտպանությունը պետք է իրականացնի պետությունը ex officio, որի դեպքում լիարժեք կարող են կիրառվել նաև խափանման միջոցները, եթե առկա են իրավաչափության պայմանները՝ չենք կարող համաձայնվել այն մոտեցմանը, որ տուժողը, որը խոցելի վիճակում չէ, զրկվում է խափանման միջոց կիրառելու միջնորդությամբ հանդես գալու հնարավորությունից: Նման մոտեցումը վտանգում է օրենքի առջև հավասարության սկզբունքը, հակասում մասնավոր մեղադրանքի ինստիտուտի հիմքում դրված հայեցակարգային դրույթներին և սահմանափակում տուժողի դա-

<sup>1</sup> Տե՛ս **Тензина Е.Ф.** Производство по делам частного обвинения как форма диспозитивности. Автореф. канд. дис., Ижевск, 2004, էջ 8:

<sup>2</sup> Այս մոտեցումը հիմնավորվում է նաև տեսության մեջ, տե՛ս օրինակ **Муртазин Р.М.** Применение мер пресечения по делам частного обвинения// Экономика и право, 2012/2, էջեր 131-133:

տական պաշտպանության և արդարադատության մատչելիության իրավունքը: Ուստի մենք այն կարծիքին ենք, որ տուժողը պետք է իրավունք ունենա նման միջնորդություն հարուցել, իսկ դատարանը պարտավոր է քննարկել և համապատասխան որոշում կայացնել դրա վերաբերյալ:

Այս առումով շատ կարևոր է այն հանգամանքը, որ մի շարք դեպքերում մասնավոր մեղադրանքի կարգով քննվող հանցագործություններին, օրինակ՝ ծեծը, առողջությանը թեթև վնաս պատճառելը, կենցաղային հողի վրա ավելի ծանր հանցագործությունների են նախորդում: Հետևաբար, խափանման միջոցի կիրառումը կարող է նաև կանխել ավելի ծանր հանցանքի կատարումը:

Նախագծի 449-րդ, 317-րդ և 322-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ մասնավոր մեղադրանքի գործերով նախնական դատախոսների ժամանակ դատարանն իրավունք ու պարտականություն ունի քննարկելու նաև խափանման միջոցի հարցը: Նկատի ունենալով, որ նախագծի 317-րդ և 322-րդ հոդվածների կանոնակարգումները հիմնականում վերաբերում են այն գործերին, որոնցով իրականացվել է մինչդատական վարույթ, ուստի մասնավոր մեղադրանքի գործերով խոսք պետք է լինի զուտ խափանման միջոց ընտրելու մասին: Ընդ որում, ինչպես նշվեց, քրեական հայցի բովանդակության մեջ չի կարող նշվել խափանման միջոց ընտրելու մասին տուժողի միջնորդությունը, ուստի ստացվում է, որ դատարանը սեփական նախաձեռնությամբ պետք է քննարկի խափանման միջոցի հարցը: Այստեղ է, որ հարց է ծագում, թե իրավաչափ են արդյոք մասնավոր մեղադրանքի գործերով նախնական դատախոսներում և ընդհանրապես դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ խափանման միջոցի կիրառման հարցի քննարկումը և լուծումը առանց տուժողի միջնորդության:

Համաձայն լինելով տեսության մեջ արտահայտած այն կարծիքին, որ մասնավոր մեղադրանքի գործերով նախնական դատախոսների ժամանակ պետք է միջոցներ ձեռնարկվեն քրեական վարույթում անձի նյութական և դատավարական իրավունքները ապահովելու համար<sup>1</sup>, այդուհանդերձ գտնում ենք, որ այս առումով առկա է որոշակի խնդիր:

Քննարկվող հարցին վերաբերող մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ իրավաչափ չի կարող համարվել մասնավոր մեղադրանքի գործերով խափանման միջոցի կիրառման հնարավորությունը դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ: Ըստ Ռ.Մ. Մուրթազինի՝ ելնելով այն ընդհանուր դրույթից, որ մասնավոր մեղադրանքի գործերով առկա է զուտ մասնավոր շահը, և նրանում արտացոլվում է դիսպոզիտիվությունը, դատավորը չպետք է սեփական նախաձեռնությամբ կիրառի խափանման միջոց, քանի որ կողմերը կարող են ցանկացած պահի հաշտության համաձայնության գալ<sup>2</sup>: Համաձայնելով հեղինակի հետ՝ հավելենք, որ դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ խափանման միջոց կիրառելը կարող է լինել ոչ իրավաչափ նաև այն պատճառով, որ Նախագծի 451-րդ հոդվածում սահմանված է, որ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե տուժողը հրաժարվում է քրեական հայցից, կամ երբ տուժողը կամ նրա ներկայացուցիչը առանց հարգելի պատճառի երեք անգամ չի ներկայանում դատական նիստին: Այսինքն՝ հնարավոր է իրավիճակ, երբ դատարանը սեփական նախաձեռնությամբ մեղադրյալի նկատմամբ կիրառի խափանման միջոց, սակայն տուժողը չներկայանա

<sup>1</sup>Տե՛ս **Ковтун Н.Н.** Судебный контроль в уголовном судопроизводстве России. Н. Новгород, 2002, էջ 85:

<sup>2</sup> Տե՛ս **Муртазин Р.М.** Применение мер пресечения по делам частного обвинения// Экономика и право, 2012/2, էջեր 131-133:

դատարան կամ հրաժարվի քրեական հայցից: Նման պայմաններում կստացվի, որ անձն անհիմն ենթարկվեց իրավունքների սահմանափակման, հատկապես երբ խոսքը վերաբերում է խիստ խափանման միջոցներին: Դրանով պայմանավորված՝ անհրաժեշտ է Նախագծում հստակեցնել այն դեպքերը, երբ դատարանը մասնավոր մեղադրանքի գործերով իրավասու կլինի սեփական նախաձեռնությամբ կիրառելու խափանման միջոց: Նման դեպք կարող է լինել, օրինակ, այն, երբ մեղադրյալը թաքնվում է դատարանից, իսկ մասնավոր մեղադրողը պնդում է նրան քրեական պատասխանատվության ենթարկելու պահանջը, որի պարագայում դատարանը պետք է հնարավորություն ունենա միջոցներ ձեռնարկել մեղադրյալին հետախուզելու, համապատասխանաբար նաև խափանման միջոց կիրառելու համար: Հետևաբար դատարանը իրավունք պետք է ունենա ամբաստանյալին հետախուզում հայտարարելու դեպքում լուծել նաև նրա նկատմամբ սեփական նախաձեռնությամբ խափանման միջոց կիրառելու հարցը<sup>1</sup>:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք՝ անհրաժեշտ է որոշակի փոփոխություններ և լրացումներ կատարել Նախագծում, մասնավորապես՝

1) տուժողի իրավունքների մեջ առանձին կետով նշել խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն հարուցելու իրավունքը,

2) մասնավոր մեղադրանքի գործերով դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ խափանման միջոց կիրառելու դեպքերը սահմանափակել և հստակ ու սպառիչ նախատեսել համապատասխան նորմով,

3) նախնական դատախուզումների փուլում խափանման միջոցի հարցի քննարկումը պայմանավորել բացառապես տուժողի միջնորդությամբ՝ բացառելով այդ փուլում սեփական նախաձեռնությամբ խափանման միջոցի հարցի լուծումը դատարանի կողմից:

## ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ МЕР ПРЕСЕЧЕНИЯ ПО ДЕЛАМ ЧАСТНОГО ОБВИНЕНИЯ ПО ПРОЕКТУ НОВОГО УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО КОДЕКСА РА

**Давид Аветисян**

*Председатель Уголовной палаты Кассационного суда РА,  
кандидат юридических наук, доцент,  
Заслуженный юрист РА*

На современном этапе судебных реформ совершенствование института частного обвинения является одной из мер упрощения уголовного правосудия и повышения его эффективности. С учетом последнего, проектом нового Уголовно-процессуального кодекса РА (далее - Проект) институту частного обвинения придано новое содержание, а именно предусмотрены правовые регулирования, которые существенно дифференцируют его от действующего института. В тоже время по отношению применения мер пресечения по делам частного обвинения Проектом не предусмотрены специальные правила, которые, по мнению автора,

<sup>1</sup> Այս մոտեցումը հիմնավորում է նաև Ռ.Մ.Մուրթազիյը, տե՛ս նույն տեղը, էջեր 131-133:

могут привести к ряду серьезных проблем.

В рамках настоящей статьи автором изучены и выявлены проблемы, которые могут возникнуть при отсутствии специальных регулирований применения мер пресечения по делам частного обвинения. Так, автором обсуждаются вопросы правомерности отсутствия четких регулирований о праве потерпевшего на ходатайство о применении меры пресечения по отношению обвиняемого, а так же применение судом мер пресечения по собственной инициативе вообще и, в частности, во время предварительных слушаний, в связи с чем автором сделана попытка предложить соответствующие решения проблем.

## PROBLEMS OF APPLICATION OF PREVENTIVE MEASURES IN CASES OF PRIVATE PROSECUTION IN THE DRAFT CODE OF CRIMINAL PROCEDURE OF THE RA

**Davit Avetisyan**

*Chairman of the Criminal Chamber of the RA Court of Cassation,  
Candidate of Laws, Docent, Honoured Lawyer of RA*

In the current stage of judicial reforms the improvement of the private prosecution institution is one of the measures of the simplification of criminal justice and enhancement of its efficiency. With regard to the latter in the Draft Code of Criminal Procedure of the RA (hereinafter referred to as Draft) it is given a new content to the institution of private prosecution, envisaged legal regulation that significantly differentiate it from the existing institution. At the same time there is not any special rule regarding application of preventive measures in cases of private prosecution in the Draft, which, according to the author, may lead to a number of serious problems.

Within the framework of the paper the author examined and revealed the problems, that may arise in the absence of specific regulation of application of preventive measures in cases of private prosecution. Thus, the author discusses the issues of lawfulness of the absence of clear regulation on the right of victim to petition for application of a preventive measure against accused, as well as application of preventive measures by the court on its own initiative in general and, in particular, during the preliminary hearings, in connection with which the author attempted to propose appropriate solutions to problems.

**Բանալի բառեր** – խափանման միջոց, կալանք, մասնավոր մեղադրանքի գործեր, քրեական հայց, տուժողի իրավունքներ, նախնական դատալսումներ, խափանման միջոց կիրառելու միջնորդություն

**Ключевые слова** – мера пресечения, заключение под стражу, дела частного обвинения, уголовный иск, права потерпевшего, предварительные слушание, ходатайство о применении меры пресечение

**Key words** – preventive measure, detention, cases of private prosecution, criminal suit, lights of victim, preliminary hearings, request for the application of a preventive measure